ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ՝
ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ
ՆԱԽԱՐԱՐ
Ռ. ՊԵՏՐՈՍՅԱՆ

« 06 » 11 2020թ.

ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ

ԲՓ 000108

Ձեռնարկողը՝ ***«Սպիտակ Տնակ» ՍՊԸ***
ք. Երևան, Մամիկոնյանց 56

Գործունեությունը՝ ***Նոր-Նորք վարչական շրջանի Դավիթ Բեկ փողոցի հ.155/3 հասցեում նախատեսվող բազմաբնակարան բնակելի համալիրի կառուցման աշխատանքների շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման հայտ***
ք. Երևան

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի տնօրենի պաշտոնակատար՝ Ա. Թարզյան

Առդիր եզրակացությունը՝ 5 թերթ

ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ

թիվ ԲՓ 000108

«06» 11 2020թ.

Երևան քաղաքի Նոր-Նորք վարչական շրջանի Դ. Բեկ փողոցի հ.155/3 հասցեում նախատեսվող բազմաբնակարան բնակելի համալիրի կառուցման աշխատանքների շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման հայտ

Ներածական մաս.

Ձեռնարկող՝	«Սպիտակ Տնակ» ՍՊԸ
Ներկայացված նյութեր՝	Շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման հայտ /Գ կատեգորիա/
Գտնվելու վայրը՝	ք. Երևան Նոր-Նորք վարչական շրջան

Բազմաբնակարան բնակելի համալիրի կառուցապատման համար նախատեսված տարածքը գտնվում է Նոր-Նորք վարչական շրջանի Դ. Բեկ փող. հ.155/3 հասցեում: Հողատարածքը գտնվում է բնակելի և հասարակական շենքերի հարևանությամբ: Տեղանքը հարթ է: Երկրաբանական տեսակետից տարածքը բարենպաստ է կառուցապատման համար: Հողամասի ընդհանուր մակերեսը կազմում է 1.25հա: Տարածքը կառուցապատված չէ, հարևանությամբ բնակելի շենքեր չկան:

Համաձայն սեփականության (օգտագործման) իրավունքի գրանցման N29052017-01-0055 վկայականի հետևյալն են՝

- հողատարածքի նպատակային նշանակությունը՝ բնակավայրերի,
- գործառնական նշանակությունը կամ հողատեսքը՝ խառը կառուցապատման,
- գրանցված իրավունքի տեսակը՝ սեփականություն:

Նախատեսվող գործունեության համաձայն «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» ՀՀ օրենքի 14-րդ հոդվածի 6-րդ մասի 7-րդ կետի ա. ենթակետի այն հանդիսանում է Գ կատեգորիայի գործունեության տեսակ:

Նկարագրական մաս. Նոր-Նորք վարչական շրջանի Դ. Բեկ փող. հ.155/3 հասցեում նախատեսվող բազմաբնակարան բնակելի համալիրի նախագիծը մշակված է անշարժ գույքի սեփականության (օգտագործման) իրավունքի գրանցման N 29052017-01-0055 վկայականի և ճարտարապետահատակագծային առաջադրանքի N01/18-07/2-1176/16-1338 առ. 26.12.2019թ. համաձայն:

Համալիրը նախատեսված է 11 բնակելի բարձրահարկ շենքերից: Համաձայն գլխավոր հատակագծի համարակալման նախատեսված են Ա1, Ա2, Ա3, Ա4, Ա5, Ա6, Ա7, Բ8, Ա9, Ա10 և Ա11 շենքեր: Ա1 Ա2, Ա3 և Ա4 համարակալումով շենքերն ունեն ինն վերգետնյա և երկու ստորգետնյա հարկեր: Առաջին վերգետնյա հարկը նախատեսված է որպես հասարակական նշանակության տարածքներ, իսկ մյուս ութ վերգետնյա հարկերը՝ որպես բնակելի: Վերոնշյալ շենքերն ունեն երկու ստորգետնյա հարկեր, որոնք նախատեսված են որպես ավտոկայանատեղիներ: Ա1 և Ա2 շենքերի առաջին ստորգետնյա հարկերը կապված են լինելու ստորգետնյա անցումով Ա3 և Ա4 շենքերի երկրորդ ստորգետնյա հարկերի հետ: Բնակելի հարկերում նախատեսված են թվով չորս բնակարան:

Ա5 և Ա6 համարակալումով շենքերը նախատեսված են ինը վերգետնյա բնակելի հարկերով: Ա5 շենքն ունենալու է մեկ կիսանկուղային և մեկ ստորգետնյա հարկ, իսկ Ա6 շենքը՝ մեկ, որոնք ծառայելու են որպես ավտոկայանատեղիներ: Բնակելի հարկերում նախատեսված են թվով հինգ բնակարաններ: Ա7 և Ա9 շենքերը գտնվելու են Բ8 շենքի աջ և ձախ կողմերում և ունենալու են ինն վերգետնյա բնակելի և մեկ ստորգետնյա հարկեր:

Ստորգետնյա հարկը նախատեսված է որպես ավտոկայանատեղիներ և ունի բացվածքներ, որոնք ապահովելու են օդափոխությունը: Ա7 և Ա9 շենքերի բնակելի հարկերում նախատեսված են հինգական բնակարաններ, իսկ Բ8 շենքը՝ վեցական բնակարան: Ա10 և Ա11շենքերը ունենալու են վերգետնյա ինն բնակելի հարկեր՝ յուրաքանչյուր հարկում չորսական բնակարանով: Ա10 շենքն ունենալու է մեկ ստորգետնյա ավտոկայանատեղի, իսկ Ա11 շենքը՝ երկու ստորգետնյա հարկ:

Շենքերի արտաքին պատերը իրականացվելու են 200մմ հաստությամբ պեմզաբլոկից, 80մմ հաստությամբ ջերմամեկուսիցիչ, հարդարված դեկորատիվ սվաղով և երեսպատման քարե սալիկներով: Կառուցապատումից ազատ տարածքները նախատեսվում է բարեկարգել և կանաչապատել՝

- հողամասի մակերեսը՝ 12500մ^2,
- կանաչապատման մակերեսը՝ 4365մ^2,
- կառուցապատման մակերեսը՝ 3994մ^2,
- բարեկարգման մակերեսը՝ – 4141մ^2:

Շինհրապարակում բետոնի շաղախի պատրաստման հանգույց չի նախատեսվում: Բետոնի շաղախը մատակարարվելու է մասնագիտացված ընկերության կողմից: Շինարարական աշխատանքների ընթացում օգտագործվող շինանյութերի պահպանումը կիրականացվի շինհրապարակում՝ ծածկի տակ: Բնառեսուրսներից օգտագործվելու է ջուր՝ տարածքների ջրցանի, հողի/գրունտի խոնավացման համար և աշխատողների խմելու կենցաղային նպատակների համար:

Բազմաբնակարան բնակելի համալիրի շահագործման ընթացքում կառաջանա կենցաղային և շինարարական աղբ, որը պայմանագրային հիմունքներով կտեղափոխվի համապատասխան ընկերության կողմից:

Ջրամատակարարումը կիրականացվի գոյություն ունեցող ջրատարից և համապատասխան տեխնիկական պայման ստանալուց հետո կմիացվի համայնքային ջրամատակարարման ցանցին: Կոյուղին կմիացվի համայնքային կոյուղատարին:

Ջրամատակարարման ներքին ցանցը նախատեսվում է իրականացնել պոլիպրոպիլենային (PPR տիպի) խողովակներով:

Շինության ամեն հարկի միջանցքներում նախատեսվում է տեղադրել ջրաչափային հանգույցներ՝ առանձին բնակարանների համար: Բնակարանների ներսում պետք է օգտագործել պոլիպրոպիլենե խողովակներ՝ նախատեսված համապատասխան տաք և տաք ջրամատակարարման համար:

ՀՀ ԲՆԱՊԱՀՊԱՆՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ԳՆԱՀԱՏՄԱՆ ԿԵՆՏՐՈՆ
ՀՀ ԲՆԱՊԱՀՊԱՆՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ԳՆԱՀԱՏՄԱՆ ԿԵՆՏՐՈՆ
ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ
ЗАКЛЮЧЕНИЕ ЭКСПЕРТИЗЫ
COMMISSION OF EXPERTS

Տաք ջրամատակարարումն իրականացվելու է ջեռուցման համակարգի համար նախատեսված երկկոնտուրանի կաթսաների միջոցով:

Ջրամատակարարման արտաքին ցանցը նախատեսվում է իրականացնել պոլիէթիլենե բարձր ճնշման խողովակներով (PE): Քաղաքային ցանցի միացման կետում տեղադրվելու է գլխավոր ջրաչափային հանգույցը, ինչպես նաև ջրաչափային հանգույցներ նախատեսվում են տեղադրել մասնաշենքերի մուտքային ջրագծերի վրա:

Կենցաղային կոյուղու և տարածքի անձրևաջրերի հեռացման համակարգերը նախատեսվում է իրականացնել կոյուղու պոլիվինիլքլորիդե խողովակներով, որոնք միանում են շինության տարածքում կառուցվող պոլիմերավազային նյութից բաղկացած դիտահորներին: Շինության ամեն հարկի միջանցքում նախատեսվում է 1 շիթ 2,5լ/վ ծախսով՝ ներքին հրդեհաշիճման կարիքների համար: Հրշեջ ծորակի տրամագիծը ընդունվում է 50մմ:

Նախատեսվում է ավտոկայանատեղիների արտաքին պատերին տեղադրել հրշեջ մեքենայի միացման գլխիկներ, որը ներքին խողովակաշարով միացվում է հակահրդեհային պոմպակայանների բաշխիչ սանրիկներին:

Բազմահարկ բնակելի համալիրի գազամատակարարումն իրականացվելու է համաձայն «Գազպրոմ Արմենիա» ՓԲ ընկերության կոմից տրամադրված տեխնիկական պայմանի:

Էլեկտրամատակարարումը կիրականացվի «ՀԵՑ» ՓԲԸ-ի կողմից տրված տեխնիկական պայմանի:

Բնակարանների ջեռուցումն իրականացվում է յուրաքանչյուր բնակարանում տեղադրված երկկոնտուրանի 24կվտ հզորության կաթսաներից: Ջեռուցման համակարգերը նախատեսվում է իրականացնել պոլիպրոպիլենային խողովակներից:

Շինարարական աշխատանքների ավարտից հետո նախատեսվում է իրականացնել տարածքի կանաչապատում: Կանաչապատման աշխատանքներն իրականացնելու համար կառուցապատողի կողմից կնախապատրաստվի «Բնակելի համալիրի տարածքի բարեկարգման և արդիականացման նախագիծ», որը կհամաձայնեցվի Երևանի քաղաքապետարանի հետ:

Կանաչապատումը նախատեսվում է իրականացնել տարածաշրջանին և տեղի կլիմայական պայմաններին բնորոշ ծառաթփային բուսականությամբ:

Նախատեսվում է կանաչապատ տարածքներում իրականացնել ռետինե խողովակներով կաթիլային ոռոգման ցանց՝ ամբողջությամբ ոռոգում կազմակերպելու համար:

Կառուցապատման ենթակա տարածքը չի առնչվում Նոր-Նորք վարչական շրջանում գոյություն ունեցող մշակութային հուշարձանների և պահպանության ենթակա տարածքների հետ:

Գործունեության ենթակա տարածքում Կարմիր գրքում գրանցված բուսատեսակներ չեն հայտնաբերվել:

Նախատեսվում է շրջակա միջավայրի վրա հնարավոր ազդեցության բացառմանը, նվազեցմանն ու փոխհատուցմանն ուղղված բնապահպանական միջոցառումների ծրագիր, այդ թվում՝

- շինարարական աշխատանքների /փոշի առաջացնող աշխատանքներ/ ընթացքում անհրաժեշտ ջրցանի իրականացում,
- ջրցանի ծավալների հաշվարկվումն այնպես, որ բացառվեն մակերևութային հոսքերը և ջուրը բավականացնի միայն փոշենստեցման համար,
- շինարարական տեխնիկայի և փոխադրամիջոցների տեխնիկական վիճակի պարբերաբար ստուգում,
- շինարարական նյութերի (հատկապես սորուն շինարարական նյութերի դեպքում, ինչպիսիք են ավազը, խիճը, հողը և այլն) փակ ծածկով մեքենաներով տեղափոխումը,
- սորուն նյութերի պահեստների ծածկում՝ համապատասխան բարձրությամբ թաղանթով, ինչը

ՀՀ ԲՆԱՊԱՀՊԱՆՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ
ЦЕНТР ОЦЕНКИ ВОЗДЕЙСТВИЯ НА ОКРУЖАЮЩУЮ СРЕДУ
ENVIRONMENTAL IMPACT EXPERTISE
02543163
ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ
ЗАКЛЮЧЕНИЕ ЭКСПЕРТИЗЫ
COMMISSION
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

կկանխարգելի փոշու տարածումը,
- կանաչապատ տարածքների ավտոցիստեռներով ոռոգումը,
- աղմկահարույց աշխատանքների իրականացումը հնարավորինս օրվա ցերեկային ժամերին,
- տեխնիկական միջոցների և ավտոտրանսպորտի շարժիչների պարբերար ստուգում և կարգավորում՝ բացառելով անսարք վիճակում գտնվող մեքենաների օգտագործումը,
- թափոնների հավաքման վայրերի և հեռացման ուղիների նախապես որոշված լինելը՝ շինարարության արդյունքում գոյացող թափոնների բոլոր հիմնական տեսակների համար,
- շինարարական աղբի պատշաճ կերպով հավաքում և հեռացում՝ արտոնագիր ունեցող աղբահավաքների կողմից:

Բազմաբնակարան բնակելի համալիրի շինարարական աշխատանքների իրականացման ընթացքում նախատեսվում է շրջակա միջավայրի վրա բացասական ազդեցության կանխարգելմանը կամ մեղմացմանն ուղղված հետևյալ մշտադիտարկումները,
- մթնոլորտային օդ կատարվող աղտոտող նյութերի (փոշի, արտանետումների որակական և քանակական պարամետրերի պարբերական չափումներ՝ երեք ամիսը մեկ հաճախականությամբ,
- փոշենստեցման նպատակով նախատեսվում է իրականացնել տարածքի ջրցանում տարվա շոգ և չոր եղանակներին՝ օրեկան 2-3 անգամ,
- տեխնիկական միջոցներից առաջացող օգտագործված յուղերով ու քսայուղերով հողերի աղտոտվածության մշտադիտարկումներ՝ երեք ամիսը մեկ հաճախականությամբ,
- աղմուկի և թրթռումների մշտադիտարկումներ՝ երեք ամիսը մեկ հաճախականությամբ:

Պատճառաբանական մաս. Երևան քաղաքի Նոր-Նորք վարչական շրջանում, օրենսդրությամբ սահմանված կարգով, իրականացվել են հանրային քննարկումներ, որոնց ընթացքում տեղական ինքնակառավարման մարմինները և հասարակայնությունը հավանություն են տվել նախատեսվող գործունեությանը: Փորձաքննական գործընթացին մասնակցել են շրջակա միջավայրի նախարարության ստորաբաժանումները, առողջապահության, արտակարգ իրավիճակների, կրթության, գիտության, մշակույթի և սպորտի, պաշտպանության նախարարությունները, քաղաքաշինության կոմիտեն և Երևան քաղաքի Նոր-Նորք վարչական շրջանը:

Ծրագրի իրականացման արդյունքում շրջակա միջավայրի վրա հնարավոր բացասական ազդեցությունները հիմնականում պայմանավորված կլինեն շինարարական աշխատանքների իրականացմամբ, որոնք կկրեն ժամանակավոր բնույթ և ազդեցությունները կլինեն թույլատրելի նորմայի սահմաններում:

Փորձաքննական պահանջներ

- Կառուցապատման աշխատանքների իրականացման ընթացքում անհրաժեշտ է խստագույնս հետևել նախնական գնահատման հայտում ամրագրված բնապահպանական պահանջների և միջոցառումների իրականացմանը՝ ըստ հայտով ներկայացված պլանի, իսկ դրանց չբավարարման դեպքում ներառել լրացուցիչ միջոցառումներ՝ պարտադիր պահպանելով բնապահպանական նորմերը:
- Կառուցապատման հետագա գործառույթներն իրականացնել << օրենսդրության և նորմատիվատեխնիկական փաստաթղթերի համաձայն, նաև պահպանելով <<

02543183 ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ ЭКСПЕРТИЗЫ OF EXPERTS

քաղաքաշինության նախարարի 2014 թվականի հոկտեմբերի 14-ի N263-Ն հրամանով հաստատված՝ «Քաղաքաշինություն. քաղաքային և գյուղական բնակավայրերի հատակագծում և կառուցապատում» ՀՀՇՆ30-01-2014 շինարարական նորմերի համաձայն՝ պահպանելով շինհրապարակի աշխատանքային անվտանգության կանոնները, բանվորների արտահագուստի և հիգիենայի պահանջները:

- Շինարարական աշխատանքների ընթացքում առաջացող թափոնների կուտակումն ու հեռացումն անհրաժեշտ է իրականացնել ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով՝ Նոր-Նորքի թաղապետարանի հետ համաձայնեցված:
- Բետոնի տեղափոխումն իրականացնել հայտում նախատեսված ձևով՝ բացառելով շինարարական հրապարակում կամ հարակից կից տարածքներում բետոնի արտադրությունը:
- Անհրաժեշտ է ապահովել հայտում ամրագրված կանաչապատման աշխատանքների իրականացումը, պահպանումը և հետագա խնամքը:
- ՀՀ կառավարության 2002 թվականի ապրիլի 20-ի «Պատմության և մշակույթի անշարժ հուշարձանների պետական հաշվառման, ուսումնասիրման, պահպանության, ամրակայման, նորոգման, վերականգնման և օգտագործման կարգը հաստատելու մասին» N 438 որոշմամբ հաստատված կարգի 43-րդ կետի համաձայն՝ աշխատանքների կատարման ժամանակ պատմական, գիտական, գեղարվեստական և այլ մշակութային արժեք ունեցող հնագիտական և մյուս օբյեկտների հայտնաբերման պահից անհրաժեշտ է դադարեցնել աշխատանքները և դրա մասին անհապաղ տեղեկացնել լիազորված մարմնին՝ համապատասխան պահպանական միջոցառումներ իրականացնելու համար:

ԵԶՐԱՓԱԿԻՉ ՄԱՍ

«Սպիտակ Տնակ» ՍՊ ընկերության կողմից ներկայացված Երևան քաղաքի Նոր-Նորք վարչական շրջանի Դավիթ Բեկ փողոցի հ. 155/3 հասցեում նախատեսվող բազմաբնակարան բնակելի համալիրի կառուցման շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման հայտի վերաբերյալ տրվում է դրական եզրակացություն՝ վերը նշված փորձաքննական պահանջների պարտադիր կատարման պայմանով:

Տնօրենի տեղակալ՝ Գ. Գևորգյան

Մասնագետ՝ Հ. Մեսրոպյան